

հիացմամբ և զմայլանքով կը խօսին այդ նկարակերտ գաւիթներուն և կամարներուն վրայ: Ս. Երկրէն նոր մեկնած էին Լատինք և անոնց թաղաւորութիւնը այլեւս վերջացած էր Երուսաղէմէն: Կ'իշխէին Արարները, որոնք յայտնի է թէ չպիտի ախորժէին Ս. Կուսի տաճարին ճօխ պատկերազրութենէն, և անպակաս պիտի ըլլային քանդող ձեռքեր, ինչպէս կ'երևի Գարգմանի արքեպիսկոպոսին նկարազրութենէն: Անոր այցելութենէն յառաջ 30 տարիներ անցած էին երբ նոյն նկարները ու մոզայիքները շինուած էին արդէն, և Տայեցին պատեհութիւն կ'ունենար իր այցելութեան՝ դիտելու այդ չափազանցօրէն ցուցադրուած պատկերներու ճօխութիւնը: Նոյն նկարներու տպաւորութեան տակ իր առջև պարզուած տեսիլը կը ցոլացնէ թէ Տայեցիին միտքը այնքան հաշտ չէր նկարուած ալլազան պատկերներու առատութենէն: Անոր պատահած տեսիլը մեզ կը պարզէ իր հայրենիքին՝ Գարգմանի (Գանձակ) մէջ է. դարուն տեղի ունեցած պատկերամարտութեան հետեւալ դէպքը (Տէս Մ. Կաղանկայտուացի, Պատմ. Աղոյսնից, էջ 401-5): Եղիվարդեցի Մովսէս կաթողիկոսի օրով՝ երբ Ազատ գետին անդիլի կողմը յունահայ կեդրոններու մէջ ծագում առած էին բիւզանդական պատկերամարտ շարժումներ՝ նոյն ոգիով վարակուած երեք հայ կրօնաւորներ Յեսուս Բահանայ, Թադիոս և Գրիգոր Գարգման ապօստանելով պատկերամարտութիւն կը քարոզեն եւ կ'ուզեն ջնջել պատկերները: Եղիվարդեցի կաթողիկոս կ'իմանայ անոնց արարքը և Գարգմանի իշխանին միջոցաւ բռնի կերպով անոնք կը զրկուին Հայոց կաթողիկոսին: Այս տողերը առնուած են այն պատասխանաբէն զոր Յովհան Մայրապետեցի հռչականուն վարդապետը գրած է նոյն կողմերու Դաւիթ եպիսկոպոսի խնդրանքովը: Մայրապետեցիէն մինչեւ Գարգմանի արքեպիսկոպոսը հինգ ու կէս դարեր անցած էին, բայց պատկերամարտ հայ կրօնաւորներու ցանած սերմերը գուցէ Գարգմանի երկրին մէջ դադանօրէն բողբոջած ու անոնք հետեւողներ ունեցած են. և կրնայ հաւանական նկատուիլ որ Գարգմանի ուխտաւոր արքեպիսկոպոսը, թէեւ խտապրօն ձգնաւոր մը, բայց ներքնապէս տհաճ էր Բեթղեհէմի եկեղեցիին մէջ նկարուած պատկերներու առատութեան, և այդ պատճառաւ կ'ունենայ յիշուած տեսիլը:

3. — Քանի մը խօսք ալ Բեթղեհէմի Հայոց վանքին վրայ: